ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

№_____-Ա « ____» _____ **2025 թ.** **ք.Երևան**

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 240-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 30-ի «Անշարժ գույքի վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրման գործընթացն իրականացնելու նպատակով հանձնման-ընդունման հանձնաժողով ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու ու Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման ու ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի 2019 թվականի մայիսի 23-ի N 77-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 240-Ա հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հավելվածի 1-ին պարբերությունում՝ «Աննա Վարդազարյան Պետական գույքի տնօրինման վարչության Պետական գույքի վարձակալության և անհատույց օգտագործման տրամադրման բաժնի պետ» բառերը փախարինել «Լուսինե Խախամյան Պետական գույքի տնօրինման վարչության Պետական գույքի վարձակալության և անհատույց օգտագործման տրամադրման բաժնի գլխավոր մասնագետ» բառերով,

2) Հավելվածի 2-րդ պարբերությունում՝ «Լուսինե Խախամյան» բառերը փոխարինել «Հասմիկ Դավթյան» բառերով,

3) Հավելվածի 3-րդ պարբերությունում՝ «Պայմանագրերի կնքման և պայմանագրային պարտավորությունների հսկողության բաժնի» բառերը փոխարինել

«Պետական գույքի հաշվառման և մշտադիտարկման վարչության Պետական գույքի մշտադիտարկման և վերլուծության բաժնի» բառերով,

4) Հավելվածի 5-րդ պարբերությունում՝ «Իրավական ապահովման և դատական ներկայացուցչության բաժնի ավագ իրավաբան» բառերը փոխարինել «Իրավաբանական վարչության Իրավական ապահովման և դատական ներկայացուցչության բաժնի գլխավոր իրավաբան» բառերով,

5) Հավելվածի 6-րդ պարբերությունում՝ «Սիրանուշ Իսոյան Հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության Հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների և վճարումների բաժնի ավագ մասնագետ» բառերը փոխարինել «Սարգիս Սարգսյան Հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության Հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների և վճարումների բաժնի ավագ հաշվապահ» բառերով:

16.10.2025

X

Signed by: AVETISYAN ARNAK 1701920336

ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ուղարկել՝
Կոմիտեի նախագահի տեղակալներին,
Կոմիտեի գլխավոր քարտուղարին,
Պետական գույքի տնօրինման վարչություն,
Հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչություն,
Իրավաբանական վարչություն,
Պետական գույքի հաշվառման և մշտադիտարկման վարչություն,
Պետական գույքի վարձակալության և անհատույց օգտագործման տրամադրման բաժին